

կաց ընութե զմահու վաղջան : եւ յայսմ յամի առեալ էր հարիւր քսան եւ երկու քրիստոնէի մարդկան ապրելում, որ քամիք դան եւ դրամն վճարէ. մեռաւ ի մահ հասարակ մարդկան : Այնքան քրիստոնեայքն դառն կսկծանօք եւ աղի ողորմ արտասուօք վարանեալ շրջին. այն ողորմելի քրիստոնեայքն քանի մի ոգի իւրեանց վէքիլ արարին եւ առաքեցին առ ածասէր եւ մեծապատիւ եւ զեքահոչակ պետութիւղ, զի մեռեալ Գրիգոր վաճառականին դոն ապրանս եւ ընկերս, վս Այ եւ յուսոյ արքայութե եւ հոգւոյ փրկութե եւ որդւոցդ արեւչատութե եւ անփորձ կենցաղավարութե իրաւանց վր հասու լինիս վս. սիրոյն Քսի, զինչ որ լինի մնացեալ այդր հրամայես տալ ի ձեռն այն տառապեալ քրիստոնէից վէքիլներացն, որ բերեն իզմիր առ ողորմելիքն, զի բազումք ի նոցանէ այլ ազգաց պարտական են, որ փոխանակ պարտուցն կամին զորդիս նոցա առնուլ, եւ դու ըստ երախտեացն քոց զվարձս ի Քսէ ընկալցիս, Ամենազօր թագաւորն երկնի եւ երկրի պահպանեալ պահեսցէ զքեզ, պայազատ զարմօքդ եւ համայն ազգօքդ եւ բոլոր ահօքդ :

Գրեցաւ սիրալրական նամակս ի Թուին Փրկչին մերոյ Ռիզձկէ, եւ ի յամսեանն Օգոստոսի ի Իթ ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս :

1667

**

Մեր Յառաջարանին մէջ ըսած էինք թէ հրատարակելով այս մեկագրութիւնը Յակոբ